# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<23 >> 09 2013թ. N: 118 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006թ. հունիսի 26-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին» թիվ 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով.

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին 2013 թվականի հոկտեմբերի 21-ից 25-ը /ներառյալ/ և հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 1-ը /ներառյալ/ գործուղել ք.Երևան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 12.12.2011թ. թիվ 952-Ա որոշմամբ հաստատված ծրագրով անցկացվող վերապատրաստման դասընթացներին:
2. Ալբերտ Մարգարյանի վերապատրաստման ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը վերապահել վարչության պետի տեղակալ Լեոնիդ Դավթյանին:
3. Գործուղման տևողությունը՝ 10 աշխատանքային օր:

Ֆ.ՑՈՂԱԿՅԱՆ

*Իսկականի հետ ճիշտ է՝*